Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ՇՀԾՁԲ-15/25-19/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.04.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Է. Պողոսյան– ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի պետ

Անդամներ

Գ. Վարդանյան- ՀՀ ՖՆ Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման, զարգացման և վիճակագրության վարչության պետի տեղակալ

Ա. Գրիգորյան – ՀՀ ՖՆ Վարչատնտեսական և շենքերի շահագործման բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Միքաելյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական և շենքերի շահագործման բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Ղազարյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ տնտեսագետ

Գնումները համակարգող

Ա. Մարտիրոսյան՝ ԳԿՎ սպասարկման բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ՇՀԾՁԲ-15/25-19/17» ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ն՝ ք. Երևան, Ահարոնյան 2, էլ. հասցեն՝ corp_tender@beeline.am, Հեռ. (+37410) 290505 և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ն՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1, էլ. հասցեն՝ corporate@ucom.am, Հեռ. (060)444444:

1.2 Համակարգում 03.04.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Ընդ որում գնային առաջարկները ներկայացվել է մեկ ամսվա ծառայությունների մատուցման համար:

ՀՀ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
		Զ/Հ1	Զ/Հ1
1	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	1 666 666.67	1 000 000
2	«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ	320 000	1 920 000

4.1 Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 9 978 300 /ինը միլիոն ինը հարյուր յոթանասունութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 «ՀՀ ՖՆ-ՇՀԾՁԲ-15/25-19/17» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ն՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

5.2 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել 3 /երեք/ աշխատանքային օրով՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը, և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակցների հարկային պարտավորությունների վերաբերյալ:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 5.2 կետում նշված փաստաթղթերի պատասխանները ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 2017թ. ապրիլի 10-ը ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Պողոսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Վարդանյան

_____ Մ. Միքաելյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Ա. Ղազարյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Մարտիրոսյան